«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում*

Դաստիարակ ***Արմինե Խաչատրյան***

Մանկապարտեզ **«Կապանի թիվ 10 ՆՈՒՀ »** ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂ-ԴԵՐԱԽԱՂԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

1. *1*. Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում

1.2. Թատրոն- դերախը որպես համադրական գործունեություն

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

2.1. Իրավիճակը որպես ներկայացման հիմք

2.2. Տիկնիկային թատրոնի դերը

2.3. Դերային խաղեր, դերախաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում

2.4. Դերախաղը նաև հոգեբանական պաշտպանություն է

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թատրոնը գործունեության այն ձևն է, որը ներառում է կրտսեր տարիքի սովորողների գործունեության համարյա բոլոր ձևերը: Նաև այդ պատճառով է կարևոր թատրոնի կազմակերպումը նախադպրոցական տարիքում:

Սաների ցանկացած գործունեություն ներկայացում է, դերախաղ. երեխան ստանձնում է մի միտք ու խաղում: Խմբասենյակը դառնում է փորձասենյակ, սաները՝ դերարարներ, իսկ դաստիարակները՝ բեմադրիչ ռեժիսորներ: Գործունեությունը կարելի է վերածել ներկայացման:

Թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, աստունքելու, հորինելու հմտություններ: Մշակում է խոսքի կուլտուրա: Դեռևս փոքրերի խմբում երեխային ներգրավում ենք նախաձեռնողական խաղերում: Երեխաները կարողանում են խաղալ «տուն-տունիկ», «խանութ», «բժիշկ-բժիշկ», «մանկապարտեզ»:

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Թատրոն դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Թատրոն-դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն:

Խաղը, դերախաղը, բեմականացումը և վերջապես թատրոնը երեխայի զարգացման հրաշալի միջոց են, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև հանկարծաստեղծման (իմպրովիզացիայի) մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրաև նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես է թատրոնը, մասնավորապես՝ իրավիճակային դերախաղերը օգնում երեխաներին ձեռք բերելու գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին, զարգացնում երեխայի խոսքը, ստեղծագործական երևակայությունը, նպաստում անհատականության դրսևորումանը, զարգացնում, կերպավորման, կերպարանափոխության հմտությունների իմպրովիզ անելու կարողության զարգացում, խմբով աշխատելու կարողության

զարգացում, վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերում, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացում, միմիկայի զարգացում:
Այս նպատակին հասնելու համար իրագործել ենք հետևյալ խնդիրները.

- Թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրություն
- Մանկապարտեզային խմբերում աշխատանքի փորձի դիտարկում և ուսումնասիրություն
- Իրավիճակային դերախաղերի համար նյութերի ընտրություն, գործնական աշխատանքի համար նյութերի նախարատրաստում,
- Երեխաների հետ գործնական աշխատանք, նյութերի փորձարկում,
- Արդյունքների ամփոփում և վերլուծություն

Այս աշխատանքով կներկայացնեմ իմ ձեռքբերումները, զարգացումները, փորձը: Գործնական աշխատանքները հիմնականում իրականացրել եմ այն հաստատությունում, որտեղ ես գործող դաստիարակ եմ: Մեր մանկապարտեզ եմ տարել նոր նախագծեր, որոնք շատ օգտակար են եղել մեր սաների համար, մեզ համար: գործնական մասն իրականացնելիս մասնավորապես փորձարկել և ուսումնասիրել ենք երեխայի ուշադրության, հիշողության, երևակայության, ստեղծագործելու կարողության, հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողության, շարժողականության, ակտիվության, վարքի կամածինության, ընկալման զարգացման վրա գործունեության ազդեցությունը:

ԳԼՈՒԽ 1.

ԽԱՂ-ԴԵՐԱԽԱՂԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

1. *1*. Խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում

Խաղը կարևոր դեր ունի նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում: Խաղի բովանդակությունը ճիշտ օգտագործելու դեպքում դաստիարակը կարող է հասնել երեխայի մեջ դրական և կարևոր որակների և հատկությունների ձևավորմանը և դրանց հետագա զարգացմանը: Խաղը երեխայի միակ ամենասիրելի զբաղմունքն է: Այն թույլ է տալիս բավարարել շատ պահանջներ՝ օրինակ հետազոտության, զվարճանքի, ինքնահաստատման էներգիայի օգտագործումը և այլն: Խաղի օգնությամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են շփվողականությունը, իր գործողությունները հասակակիցների գործողությունների հետ կոորդինացնելու ունակությունը: Խաղերի միջոցով երեխաները փորձում են արտահայտել իրենց զգացմունքները, բացահայտել իրենց ներքին աշխարհը, լուծել ներքին կոնֆլիկտները, բարձրացնել ինքնագնահատականը: Դերախաղը, տիկնիկախաղը ազատ են, հանպատրաստից և ոչ հարկադիր: Խաղալու համար երեխան պետք է ցանկանա անել այն, ինչ անում է, գործողությունն ինքն է ընտրել, թե դաստիարակն է առաջարկել, երեխան պետք է ազատ անի դա: Եթե խաղի ընթացքում երեխան իր ընտրությունը ինքնուրույն չի կայացնում, այլ կատարում է դաստիարակի ցուցումները, ուրեմն նա չի խաղում:

Խաղը երեխայի համար հետաքրքիր և հրաշալի է: Խաղի ժամանակ երեխան կլանվում է այն բանով, ինչ նա անում է: Խաղը անվերջ է և երևայական, արտահայտիչ, ստեղծագործ և տարատեսակ: Երեխաների խաղի մեջ ճիշտ կամ սխալ պատասխաններ չկան: Խաղի ընթացքում երեխաները կլանվում են մի պրոցեսում, որտեղ նրանք ինչ որ անում են, եթե դա վտանգավոր չէ իր կամ ուրիշների համար, ընդունելի է և նպաստում է գործունեության կարևորմանը: Հիմնավոր ուսուցման համար երեխայի իրականացվելիք խաղը պետք է ներառի հետևյալ հատկանիշները. այն պետք է լինի փոխգործոն, հանպատրաստից և ազատ, երեխայի կամքով, ազատ: Այդ դեպքում երեխան անկաշկանդ շփվում է այլ մարդկանց կամ իրերի հետ,

բավարարում է իր հետաքրքրությունները, պահանջմունքները, կարողանում է իր իսկ խաղից ելնելով հետևություններ, վերլուծություններ կատարել:

Խաղը երեխային հնարավորություն է տալիս զննել, ստուգել, զարգացնել մտքեր և գաղափարներ, իր սխալներից ելնելով՝ սովորել և կատարելագործվել: Խաղը երեխային պատրաստում է ապագա կյանքին:

Կարևորն այն է, որ երեխան լավատեսության և հավատի պաշար կուտակի անխուսափելի կենցաղային դժվարությունների դեմ պայքարելու համար: Այս գործընթացի ժամանակ երեխաներն ազատ են արտահայտելու իրենց մտքերը:
«Եթե ցանկանում եք մտածել սովորեցնել, ապա նախ և առաջ պետք է հորինել սովորեցնել»: Ջոն Դյուի:

1.2. Թատրոն- դերախաղը որպես համադրական գործունեություն

Թատրոնը գործունեության այն ձևն է, որը ներառում է կրտսեր տարիքի սովորողների գործունեության համարյա բոլոր ձևերը: Նաև այդ պատճառով է կարևոր թատրոնի կազմակերպումը նախադպրոցական տարիքում:
Սաների ցանկացած գործունեություն ներկայացում է, դերախաղ. Երեխան ստանձնում է մի միտք ու խաղում: Խմբասենյակը դառնում է փորձասենյակ, սաները՝ դերարարներ, իսկ դաստիարակները՝ բեմադրիչ ռեժիսորներ: Գործունեությունը կարելի է վերածել ներկայացման:

Սաներին շատ են դուր գալիս նախապատրաստական վարժությունները՝ բերանային ապարատի, լեզվի, ծնոտի, շուրթերի, ինչպես նաև ձայնային խաղիկները: Սաները դրանք կկատարեն ծիծաղով, ուրախությամբ, իսկ դաստիարակը դրանով կնպաստի սաների խոսքի զարգացմանը և վարժությունները կունենան թերապևտիկ ազդեցություն: Ի վերջո, խմբասենյակն առանց սաների դատարկ տարածություն է, ինչպես որ բեմն առանց դերարարների: XX դարի թատրոնի մարդը (Պիտեր Բրուք) այդպես էլ կոչեց՝ «Դատարկ տարածություն»: Հարցրել են՝ ի՞նչ է նշանակում, ասել է՝ ոչինչ: Նույնը և նախակրթարանում է, կրտսեր դպրոցում, հեղինակային մանկավարժության մեջ՝ «ոչինչը» խաղի պայմանն է ու միջավայրը, և ամեն ինչ՝ «մի

հորինվածքում»:

Թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, ասմունքելու, հորինելու հմտություններ: Մշակում է խոսքի կուլտուրա: Դեռևս փոքրերի խմբում երեխային ներգրավում ենք նախաձեռնողական խաղերում: Երեխաները կարողանում են խաղալ «տուն-տունիկ», «խանութ», «բժիշկ-բժիշկ», «մանկապարտեզ»:

Երեխաների առջև բացելով կյանքի այս կամ այն իրավիճակը, մանրամասնելով իրադրությունը, դաստիարակը սաների հետ քննարկելով, գրական նյութը դարձնում է բեմականացում-դերախաղ՝ երեխային մղելով անկեղծ զրույցի: Երեխան ինքնուրույն պատկերացնում է խնդիրը, նրա մեջ արթնանում է համապատասխան զգացմունք և խոսքը զարգացնելով դերախաղի միջոցով՝ ի ցույց է դնում իր հույզերը: Նախադպրոցականը ձգտում է հասկանալ իրեն շրջապատող միջավայրը: Նա այդ անում է դերախաղի միջոցով: Սակայն կան երեխաներ, որոնք չեն պատկերացնում դիմացինի տրամադրությունը, ժեստերը: Նրանց հետ անհատական աշխատանք պետք է տարվի:

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Թատրոն դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Թատրոն-դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն: Երեխային պարտադրաբար ընդգրկել դերախաղի մեջ՝ անիմաստ է: Նա պետք է կամովին ընդգրկվի բեմականացման մեջ: Դերախաղի գործունեության հիմքը ազատ ընտրության զգացումն է: Այսպիսով, թատրոն-դերախաղն ինտեգրված գործունեության լուրջ տեսակ է:

Խաղը և կախարդանքը երեխային ուղեկցում են ողջ մանկության ընթացքում: Տարբեր տեսակի խաղերը ինքնարտահայտման, ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհը և ինքն իրեն ճանաչելու հրաշալի միջոց է: Երեխայի խաղն ինչ-որ դեր կատարելու պահանջմունքի արտահայտություն է: Խաղը վերածվում է դերախաղի: Դերախաղը ազատ դրսևորվելու հնարավորություն է: Խաղը, դերախաղը,

բեմականացումը և վերջապես թատրոնը երեխայի զարգացման հրաշալի միջոց են:

Դերախաղի միջոցով որակվում են բոլոր այն հատկություններն ու որակները, որոնք անհրաժեշտ են մարդուն: Դերախաղի նպատակն է զարգացնել խոսքը, երևակայությունը, դերասանական կարողությունը, գեղարվեստական ճաշակը, շարժումների կոորդինացիան: խաղալիս կամ բեմադրելիս երեխան անկաշկանդ փորձարկում է բանավոր խոսքը՝ առանց վախենալու սխալներից: Խոսքը ձեռք է բերում կարևոր նշանակություն հորինված իրավիճակի քննարկման ժամանակ առարկաների անվանման և գործողությունների նկարագրման համար:

Թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, ասմունքելու, հորինելու հմտություններ: Մշակում է խոսքի կուլտուրա: Դեռևս փոքրերի խմբում երեխային ներգրավում ենք նախաձեռնողական խաղերում:

ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

2.1. Իրավիճակը որպես ներկայացման հիմք

Թատրոնի, ներկայացման համար միշտ հիմք է ծառայում իրավիճակը: Դաստիարակը ճիշտ է օգտագործում իրավիճակը, ճիշտ է կողմնորոշվում, մտնում է խաղի մեջ կամ ուղղորդում: Հաջորդ պահին կամ օրը երեխաները իրենց արածն անպայման դիտում են, ու իրենց արածն իրենց համար դառնում է ներկայացում:

2 տարեկանի համար դերախաղեր են ճչոցները, նմանակումները, ասիկները, հաշվերգերը: Նախակրթարանում դրանք շատ կարևորվում են:

Որպեսզի խաղը նեղ խմբում չսահմանափակվի, նախակրթարանային խմբերը միասին են խաղում, միասին են խաղը հորինում կամ զարգացնում: Խոսք-խաղալիքը նախ սիրելի է դառնում: Նման խաղերն այնպես են կազմակերպվում, որ սաներն ազատ լինեն, չկաշկանդվեն, ստեղծական վիճակում հայտնվեն, խաղը հասկանալի լինի՝ հեշտ տրվող, խաղացվող, որ երեխան ինքը որոշի՝ երբ խաղալ այդ խաղալիքով:

Դերային խաղի գործողությունները ծավալվում են այդ խաղի աշխարհում: Այդ աշխարհը կարող է լինել ամբողջովին հորինված, կամ հիմնված լինել ինչ-որ գրքի կամ ֆիլմի, կամ մի իրադարձության սյուժեի վրա: Այսպիսի խաղերում շատ հաճախ բացակայում է վերջնական նպատակը, և այդ խաղային աշխարհի ուսումնասիրումն է: Սա ձեռք բերած գիտելիքների կամ փորձի հարստացման միջոց է: Կատարելով որևէ դեր՝ երեխան ձգտում է՝ ըստ համապատասխան իրավիճակի դրսևորել այն և հասցնել ավարտին:

Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել խաղի համար բազմաբովանդակ և հետաքրքրաշարժ թեմատիկա: Հաճախ հանդիպող թեմաներից են՝

- «Խանութ»
- «Լողավազան»
- «Շտապօգնություն»
- «Բժիշկ-բժիշկ»
- «Ընտանիք»
- «Մանկապարտեզ»

- «Տոնավաճառ»
- «Շուկա»
- «Ավտոբուս»

Այդ կերպ հնարավոր է լինում իրականացնել տարբեր դերեր: Այստեղ կարևորվում են համապատասխան մթնոլորտի ստեղծումը և մասնակիցների անկաշկանդ վարքագծի ապահովումը: Դերախաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Այն օգտակար է երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կառուցվածք ունեն: Դերախաղի գրագետ իրականացումն անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին: Բեմականացված խաղերը երեխաների կողմից շատ սիրված են: Երեխաները մեծ հաճույքով են միանում խաղին՝ պատասխանում են տիկնիկների հարցերին, կատարում նրանց խնդրանքները, խորհուրդներ տալիս, դառնում այս կամ այն կերպարը: Նրանք ծիծաղում ու լալիս են տիկնիկների հետ, նրանց զգուշացնում են վտանգների մասին, միշտ պատրաստ են իրենց սիրելի հերոսներին օգնության հասնել:

2.2. Տիկնիկային թատրոնի դերը

Տիկնիկային թատրոն ցանկալի է ունենալ այնտեղ, որտեղ երեխա կա՝ դպրոցում, մանկապարտեզում, տանը, ամառային ճամբարում, մանկական հիվանդանոցում և այլն: Փոքրիկ մարիոնետները, որոնք կարելի է հագցնել երեխայի մատիկներին կամ ձեռքերին, հետաքրքիր կդարձնեն երեխայի ժամանակը, օրինակ, ավտոմեքենայի մեջ, բժշկի սպասասրահում և այլն:

Տիկնիկային թատրոնով զբաղվելիս երեխայի մոտ զարգանում են երևակայությունը, հիշողությունը, տրամաբանությունը: Տիկնիկային թատրոնը լավ ազդեցություն է թողնում երեխայի հուզական մթնոլորտի զարգացման վրա, «լիցքավորում» է երեխային ուրախությամբ, դրական հույզերով: Մասնակցելով բեմականացված խաղերին՝ երեխաները ծանոթանում են շրջակա աշխարհի հետ: Երեխաները սիրում են խաղալ հատկապես հասակակիցների հետ: Խաղը նրանց համար լուրջ, բայց միաժամանակ զվարճալի զբաղմունք է: Ծնողները միշտ հիացմունքով են հետևում, թե ինչպես են

երեխաները տանը կամ մանկապարտեզում իրենց սիրելի տիկնիկի անունից խոսում:

Երեխաներին իրենց առաջին տիկնիկային ներկայացումը կարելի է ցուցադրել դեռևս շատ փոքր հասակից. 6-7 ամսականից արդեն կարելի է նրա համար իսկական ներկայացում կազմակերպել: Այսպես, բռնում եք փոքրիկի ամենասիրելի խաղալիքը և նրա անունից երգեր երգում ու զրուցում երեխայի հետ:

Երեխան «բաց» է երևակայական աշխարհի ու երևակայան իրավիճակների համար: Նա ուշադրություն չի դարձնում Ձեր ձեռքերին, այլ տեսնում է այն պատմությունը, որը տեղի է ունենում իր առաջ, անհանգստանում է հերոսների համար:

Սկսած 2.5 տարեկանից՝ երեխաների հետ տանն եղած խաղալիքներով կարելի է բեմականացնել ամենապարզ հեքիաթները: Բացի այդ, կարելի է տանը, մանկապարտեզում պատրաստել տարբեր հեքիաթների հերոսներ՝ ձեռնոց- տիկնիկներ: Սկզբում երեխան «տեսնում» է փոքրիկ ներկայացում ձեր ձեռքերում, ապա ինքն էլ է ցանկություն հայտնում խաղալիքը վերցնել իր ձեռքը և խոսել նրա անունից: Շատ կարևոր է խաղի ժամանակ երեխային դիմել ու նրան ներքաշել գործողությունների մեջ: Եթե Ձեր ձեռքերում այդ ներկայացումները բավականին տպավորիչ ու վարակիչ են, ապա 3-4 տարեկանում արդեն երեխան ինքնուրույն ակտիվորեն կխաղա դերասան-խաղալիքների հետ:

2.3. Դերային խաղեր, դերախաղի կարևորությունը միջանձնային հարաբերություններում

Դերախաղի ժամանակ երեխան դառնում է նախաձեռնող, ակտիվ: Թատրոն դերախաղերը երեխայի մոտ զարգացնում են գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը: Թատրոն-դերախաղը տալիս է հաղորդակցվելու, ուշադրությունը կենտրոնացնելու կարողություններ, զարգացած մտածողություն, արագ կողմնորաշվելու, ճիշտ լուծումներ գտնելու կարողություն, ուրիշներին օգնելու պարտականություն: Երեխային պարտադրաբար ընդգրկել դերախաղի մեջ անիմաստ է: Նա պետք է կամովին ընդգրկվի բեմականացման մեջ:

Դերախաղի գործունեության հիմքը ազատ ընտրության զգացումն է: Այսպիսով, թատրոն-դերախաղն ինտեգրված գործունեության լուրջ տեսակ է: Օգտագործելով

խոսքը՝ երեխան շփման մեջ է մտնում, համագործակցում է մյուսների հետ: Այսօր ծնողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը բացասաբար է ազդում երեխայի զարգացման, նրա բանավոր խոսքի ձևավորման վրա: Պարբերաբար երեխայի նկատմամբ անտարբերությունը վատ է ազդում երեխայի հոգեկան վիճակի վրա, երեխան դառնում է ագրեսիվ, նյարդային ամաչկոտ, տրամադրության անկումներով: Սա արդեն ազդում է երեխաների միջանձնային հարաբերությունների վրա:

Միջանձնային հարաբերությունները ստեղծվում են իրավիճակների դեպքում, խաղի ժամանակ: Երբ երեխան խաղալիք է ուզում ընկերոջից, պետք է խոսի նրա հետ, հարցնի, մտերմանա և առաջարկի խաղալ միասին: Դերային խաղի միջոցով ստեղծվում է կապ, միջանձնային հարաբերություն երեխաների հետ: Այս կապը դրական է ազդում երեխայի զարգացման գործում, երեխան ազատվում է բարդույթներից, մեկուսանալու ցանկությունից, ձեռք է բերում ինքնավստահություն: Երեխաներն արդեն նախադպրոցական տարիքից հաղթահարում են իրենց վախերը, ավելի հեշտ և բնականոն է ստացվում շփումները մեծահասակների հետ:

Վիրաբույժ Պիրոգովը կարծում է, որ մանկական թատրոնը հիանալի միջոց է երեխայի մտքի, սրտի, ճաշակի, միջանձնային հարաբերությունների վրա ազդելու համար: Իսկ հոգեբույժ Յակոբ Լևի Մորենոն կլինիկայում ստեղծում է բուժական թատրոն՝ հոգեդրամա: Յուրաքանչյուր ներկայացում խաղալիս երեխան սիրում է իր շուրջն ունենալ դեկորացիաներ, տիկնիկներ: Տվեք երեխաներին ինքնուրույն գործելու հնարավորություն, և նա իր հավաքածուից կգտնի այն, ինչն իրեն կօգնի մտնել դերի մեջ: Թատերական խաղեր խաղալիս երեխաներն իրենք են ստեղծում դեկորատիվ պայմաններ: Դեկորացիաներ պատրաստելու համար կարող են ծառայել հին անկողնու պարագաներ, հեռուստացույց, կեղծամներ, գլխարկներ: Այսպիսով, երեխան իր համար ստեղծում է ներկայացման, դերախաղի պայմաններ, սկսում շփվել երևակայական կերպարների հետ: Նման խաղից հետո շփումը այլ երեխաների հետ շատ անմիջական է լինում: Բոլոր երեխաները սիրում են իրենց ձեռքով պատրաստել դեկորացիաները, տիկնիկների հագուստները:

Անհատի վարքի հմտությունների ձևավորման հզոր միջոցներից մեկն է համարվում դերային խաղը: Երեխաների անհատական առանձնահատկությունները և

բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Ընդհանուր խաղերը մեծ նշանակություն ունեն բնավորության դաստիարակման գործում՝ դիմակայություն ցավի նկատմամաբ, արժանապատվության զգացում: Երեխան իր կյանքի ոչ մի փուլում չի սովորի այդքան շատ, ինչքան խաղային գործունեության ընթացքում: 1,5 տարեկանից փոքրիկը ընդօրինակում է այն, ինչ անում են մեծերը. մայրը լվանում է ափսեները, պապիկը կարդում է, հայրիկը մեքենա է վարում: Իհարկե, ոչ բոլոր երեխաներն են կարողանում կռահել ու խաղալ դերային խաղ: Անհրաժեշտ է հուշել և ցույց տալ, որ տիկնիկներին ու արջուկներին կարելի է կերակրել գդալից, պատառաքաղից: Ընդ որում, պետք է մեկնաբանել գործողությունները և արտասանել ձայները: Եթե երեխան 1,5 տարեկանում կարող է փոխարինել իրական առարկան (օրինակ գնացքը մի շարք խորանարդիկներով) հորինված առարկաներով, ապա դա շատ լավ ցուցիչ է նրա զարգացման համար: Չի կարելի ընդհատել և ուղղել նրան, երեխան պետք է երևակայի:

Երեխային շատ են անհրաժեշտ դերային խաղերը, դրանք օգնում են նրան նախապատրաստվել կյանքին ու հասարակությանը: Եթե տղաներն իրենց վրա վերցնում են պաշտպանի, ռազմիկի դերը, ապա աղջիկները՝ ապագա մոր, տնային տնտեսուհու դերը: Մինչև 6 տարեկան դերերը կարող են փոփոխվել և լինել տարատեսակ: Հետագայում երեխան կհասկանա, որ մոր դերը խաղալ և օրորել տիկնիկներին պետք է կատարեն աղջիկները:

Գլուխ 2.4. Դերախաղը նաև հոգեբանական պաշտպանություն է

Դերային խաղը երեխայի հոգեկան զարգացման մեջ զբաղեցնում է կարևոր տեղ: Փոխարինող առարկաները սիմվոլների հասկացման գործում զբաղեցնում են առաջին աստիճանը. չէ՞ որ ոչ ոք թույլ չի տա երեխային իրական արդուկի կամ մուրճի հետ խաղալ: Յուրաքանչյուր երեխայի ամենաբաղձալի ցանկությունն է տիրանալ անհասանելի իրերին: Այդ պատճառով մանկական ֆանտազիայում մուրճ է դառնում սովորական մատիտը: Դերային խաղում զարգանում է կամածին վարքը: Երեխայի մոտ զարգանում է կամածին ուշադրություն և կամածին հիշողություն: Հիմնվելով ստացած

տեղեկության վրա՝ նա փողարինող առարկան օժտում է այն հատկանիշներով, որոնք առավել շատ են նրան հետաքրքրում: Մանկական հոգեբաները նշում են, որ ստեղծագործական ընդունակությունները առավել զարգացած են այն երեխաների մոտ, ովքեր ունեն քիչ խաղալիքներ և ավելի շատ խաղում են քարերով, կամ կենցաղային առարկաներով: Իր երևակայության մեջ հասարակ առարկային տալով տարբեր գործառույթներ՝ երեխաները սովորում են գնահատել առարկան բոլոր կողմերից: Հետագայում նման երեխաները իրադարձությանը նայում են դիտորդի տեսանկյունից և հասկանում այլոց տեսակետները: Հասակակիցների հետ դերային խաղերը օգնում են կառուցել հարաբերություններ ընկերների հետ, պաշտպանել սեփական հետաքրքրությունները և հաշվի առնել այլ մարդկանց ցանկությունները: Խաղի մեջ փոքրիկը ձեռք է բերում հմտություններ, որոնք պետք կգան ուսումնական գործընթացում:

Ինչքան երեխայի հայացքները փոխվում են, այնքան էլ փոխվում է խաղի սյուժեն: Երեխաների համար դերային խաղերն ունեն ավանդական սյուժե՝ խանութ, հիվանդանոց, դպրոց: Նման խաղեր խաղում են բոլոր սերունդները՝ ավելացնելով նրանց տարբեր բովանդակություններ: Խաղի բովանդակության վերաբերմունքը փոխանցվում է մասնակիցներին: Մի «մայրը» կզայրանա ընտանիքի վրա բարձր ձայնով, մյուսը երգեր կերգի և գրքեր կկարդա:

Մարդկանց հարաբերությունները իրար նկատմամբ շատ են հուզում երեխաներին: Դերային խաղի մեջ փորձելով կրկնել այն ամենը, ինչ նրանք տեսել և լսել են, երեխաներն իրենց վրա են վերցնում այս կամ այն ոճը:

Ինչքան մեծանում է երեխան, այնքան բարդանում են դերային խաղերը: Ի հայտ են գալիս կանոններ, որոնց հարկավոր է հետևել: 6-7 տարեկան երեխաները կպնդեն խաղը անցկացնել իրենց ձևով՝ մտնելով կոնֆլիկտի մեջ և իրավունք ստանալով խաղալ գլխավոր դերը՝ «մամայի» կամ «վաճառողուհու»: Մեծանալով, ավագ նախադպրոցականները սովորում են պլանավորել խաղը, ընդ որում, երեխաները լավ են ընկալում նոր դերերը, բայց ոչ դրանց ստեղծումը: Նրանք վերցնում են միայն խաղի այն ձևերը, որոնք ցույց են տվել նրանց ընկերները կամ մեծահասակները: Ոչ բոլոր երեխաները հակվածություն ունեն դեպի դերային խաղ: Ամաչկոտ, քաշվող փոքրիկները

հաճախ նախընտրում են սպորտային խաղեր, կամ գերադասում են միայնակ մնալ համակարգչի դիմաց: Չի կարելի թերագնահատել դերային խաղերի

ներդրումը երեխայի զարգացման գործում: Եթե երեխան ամաչկոտ է, կարելի է նրան գրավել դեպի խաղը՝ այն վերածելով թատերական ներկայացման: Կախարդական հեքիաթները, որոնք սիրում են երեխաները, կօգնեն պատրաստել վարքի կանոնների ճիշտ հմտությունների: Դերախաղը հարստացնում է երեխայի զգացմունքները և զգայարանները: Երեխան կարող է հիշել ամիսներ առաջ տեղի ունեցած հաճելի մի իրադարձություն և խաղալ այդ իրավիճակը տիկնիկի հետ: Դերախաղ կարող են կազմակերպել չափահաս երեխաները փոքրերի հետ, սա ունի դրական ուղղվածություն, երբ, կազմակերպելով դերախաղ, չափահաս երեխաները կարող են «առաջնորդի» դերը փոխանցել փոքրին: Երեխաները պետք է խաղան իրենց հասակակիցների հետ, այլապես կմեծանան բարդութավորված, սեփական կարծիքից զուրկ, ագրեսիվ:

Դերախաղը ծանոթանալու, շփվելու, ընկերանալու միջոց է: Դերախաղը երեխաներին հնարավորություն է տալիս բացահայտել իրենց ընդունակությունները: Անհրաժեշտ է ընտրել խաղի համար բազմաբովանդակ և հետաքրքրաշարժ թեմա: Այդ կերպ հնարավոր է լինում իրականացնել տարբեր դերեր: Այստեղ կարևորվում են համապատասխան մթնոլորտի ստեղծում և մասնակիցների անկաշկանդ վարքագծի ապահովումը: Դերախաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ լինել ազատ: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիք ունեն: Դերախաղի գրագետ իրականացումն անգնահատելի օգուտ է բերում մասնակիցներին: Դրանք ցանկալի է անցկացնել պարապմունքի մեջտեղում: Ցանկալի է, որ խմբերը լինեն փոքր: Եթե մի խումբը խաղում է, մյուս լինում է դիտորդ: Դերախաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Դերային խաղը երեխայի համար սիրելի, զվարճալի, հետաքրքիր խաղ է, որը զարգացնում է նրա խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու-աշխատելու հմտությունները: Դերախաղի էական նշանակությունը այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և կարծես աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից,

որի դերը կատարում է: Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական, իր ստեղծած կերպարի միջոցով: Նա հավատում է իր հորինած կերպարին, ավելին, ոչ միայն հավատում է, այլև ինքն է կատարում այդ դերերը: Մտնելով կերպարի մեջ՝ երեխան դառնում է նա, ում ընդօրինակում է: Դերախաղը հիմնականում խմբային է, մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Այսպես խաղում ձևավորվում են երկար, շղթայաձև փոխկապակցված խաղային խմբեր: Օրինակ՝աշխատում է հիվանդանոցային համալիրը, բժիշկները զննում են հիվանդներին, վիրաբույժը վիրահատում է, ատամնաբույժը բուժում է ատամները, շտապօգնության մեքենան հրդեհից այրվածներին հասցնում է հիվանդանոց, հիվանդանոցի կողքին այրվում է բնակելի շենք, այնտեղ են շտապում հրշեջ մեքենաները և այլն: Դերային խաղերը ժամանցային բնույթի խաղեր են, դրամատիկ գործողության տեսակ, որի մասնակիցները գործում են ընտրված դերերի շրջանակներում, ղեկավարվում են ընտրված դերի միջավայրի տրամաբանությամբ և գործում են արդեն եղած սյուժեով, կամ հենց իրենք են ստեղծում սյուժեն: Հաջող է ստացվել խաղը, թե ոչ, որոշվում է խաղացողի խաղի՝ ընդունված կանոններին համապատասխանությամբ: Կանոնների շրջանակներում խաղացողները հանգիստ կարող են իմպրովիզ անել, որը կբերի իրենց կամ իրենց թիմի հաղթանակին: Այսպիսով, դերային խաղն իրենից ներկայացնում է մեկ կամ մի խումբ անձանց կողմից որոշակի իրադարության խաղային մոդելավորումը: Դերային խաղի գործողությունները ծավալվում են այդ խաղի աշխարհում: Այդ աշխարհը կարող է լինել ամբողջովին հորինված, կամ հիմնված լինել ինչ-որ գրքի, ֆիլմի, կամ մի իրադարձության սյուժեով: Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է: Հոգեբանների կարծիքով խաղի միջոցով ստեղծված խթանումը (խաղային խթանումը) պետք է կիրառվի ճանաչողական, էսթետիկական, հաղորդակցական խթանումների հետ միասին: Խաղի ընթացքում երեխան գտնվում է խոսքային պատրաստականության մեջ, ուշադիր լսում է դաստիարակին և ընկերներին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում ու ձանձրացնում նրան:

ԳԼՈՒԽ 3.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ

Գործնական աշխատանքները հիմնականում իրականացրել եմ այն հաստատությունում, որտեղ ես գործող դաստիարակ եմ:

Նոր մտքեր են ծագել, որոնք շատ օգտակար են եղել մեր սաների համար, մեզ համար: գործնական մասն իրականացնելիս մասնավորապես փորձարկել և ուսումնասիրել ենք երեխայի ուշադրության, հիշողության, երևակայության, ստեղծագործելու կարողության, հաղորդակցման (կոմունիկատիվ) կարողության, շարժողականության, ակտիվության, վարքի կամածինության, ընկալման զարգացման վրա գործունեության ազդեցությունը:

Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Գործնական փորձարկման նպատակը և խնդիրները կրթական, դաստիարակչական, զարգացնող:

Ձևավորել գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին, երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում, խոսքի զարգացում, անհատականության դրսևորում, նախաձեռնելու, ակտիվ գործելու մղումների ակտիվացում, կերպավորման, կերպարանափոխության հմտությունների զարգացում, իմպրովիզ անելու կարողության զարգացում, խմբով աշխատելու կարողության զարգացում, վերլուծելու, համադրելու ունակության ձեռքբերում, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացում, միմիկայի զարգացում:

Երեխաները հանպատրաստից պիեսներ են հորինում, անհրաժեշտ բեմական միջոցներն իրենց ձեռքով պատրաստում, որպես դերասաններ հանդես գալիս՝ տրված թեմայով իմպրովիզացիա են անում, հանդիսատեսներին ներկայացման մեջ ներքաշում,

և այստեղ թատրոնը կյանքի պահ է, ոչ թե ապրածի վերարտադրություն: Դա հորինող երեխային օգնում է ընդլայնելու իր մտահորիզոնը: Առաջին իմպրովիզացիաներից հետո, զարգացում ապահովելու նպատակով, այն պետք է ինչ- որ բանով հագեցնել, հարստացնել: Առաջանում է դերային խաղի պահանջը՝ խաղարկային իրավիճակ և ներկայացում՝ խաղ-աշխատանքի ընթացքում ծնված սցենարով:

Խաղարկային իրավիճակների վերարտադրումը «տունտունիկ» խաղի նման է, դերային խաղ՝երեխային լավ ծանոթ, ապրված իրավիճակներով և հարաբերություններով: Ամեն մեկն իր դերն է ընտրում ու խաղում: Նա միաժամանակ սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում հասակակիցների հետ, վերարտադրում հասարակության մեջ գործող սոցիալական հարաբերությունները, հասարակության մեջ ընդունված օրենքները, ապրում այդ օրենքներով: Առաջին հայացքից թվում է, թե նա ընդամենը պասիվ ընդօրինակող է: Իրականում նա նոր տարրեր է ներմուծում, այլ կերպ է մեկնաբանում իրավիճակն ու հարաբերությունները, նոր երանգ է ներմուծում սովորական առօրյան վերարտադրող իրավիճակի մեջ՝ ելնելով իր կենսափորձից, աշխարհընկալումից: Նրա համար այդ խաղը ոչ թե նմանակում է, այլ կյանքի պահ: Դրա արդյունքը փոքրիկ էտյուդներն են:

Խաղարկային իրավիճակները կարող են նաև քիչ կապ ունենալ կամ ընդհանրապես կապ չունենալ առօրյայի, կենցաղի հետ, դրանց ստեղծողը երեխայի երևակայությունն է, այս դեպքերում նրա մտածողությունն ավելի ազատ է, անկաշկանդ:

«Նմանակումն այն միջոցներից մեկն է, որոնցով մեծահասակների գործունեությունն ազդակ է դառնում, հետաքրքիր, բազմազան, նոր, որ մտքի արագ առաջընթացի ծայր է տալիս: Սակայն միայն նմանակումը մտածողությունը չէր խթանի, եթե պարզապես ուրիշների արտաքին արարքները թութակների պես պատճենելով սովորեինք»: Ջ.Դյուի

Առաջին փորձ

Նորեկ սանը տխրում էր առանց մայրիկի, չէր համակերպվում իր նոր վիճակի հետ: Այդ օրերին ներկայացնում էինք դերախաղեր: Սաներս երգում էին, պարում, երբեմն նմանակում, ծիծաղում: Իմ նորեկին առաջարկեցի վերցնել որևէ խաղալիք ու պատկերացնել, որ եղբայրն է, ընկերը, կամ մայրիկը: Երեխան սկսեց թաքուն խաղալ: Հասկացա նրա վախերը, անհանգստությունը, մոտեցումս փոխվեց: Իհարկե, օրեր անց

նա իրեն լավ էր զգում, չկար հուզմունքը վախը:

Այստեղ՝ աշխատանքի ընթացքում կիրառվող մեթոդները.

- Խաղային մեթոդ
- Գործնական ուսուցման մեթոդ
- Ակտիվ ուսուցման մեթոդ
- Ընդհանուր հարց ու պատասխանի մեթոդ
- Հարցադրումների մեթոդ
- Հետազոտական մեթոդ

Ներկայացում-խաղը օգնում է իմանալ փոքրիկի ամենագաղտնի հույզերն ու անհանգստությունները, որոնք նա երբեմն չի հասկանում ու որոնց հետ ինքնուրույն պայքարել չի կարող: Եթե, օրինակ, թվում է, որ փոքրիկն իրեն լավ չի զգում մանկապարտեզում, բայց մենք չենք հասկանում, թե ինչո՞ւ, առաջարկում ենք երեխային տիկնիկների հետ ներկայացում բեմադրել այն մասին, թե ինչպես էր արջուկ-տիկնիկը հաճախում մանկապարտեզ: Երեխան կկատարի թե՛ նորեկ սանի, թե՛ դաստիարակչուհու, թե՛ մյուս սաների դերերը: Բեմականացնենք այնպիսի տեսարան, որտեղ արջուկը մանկապարտեզում ճաշում է, զբոսնում, պառկում է քնելու: Հավատացեք, նման ձևով մենք երեխայի մասին ավելի շատ բան կիմանանք, քան նրա հետ զրուցելով:

Ամաչկոտ երեխաներին մարիոնետները օգնում են շփվել այլ մարդկանց հետ. շնիկի անունից խոսելն ավելի հեշտ է, քան, եթե հենց ինքը խոսի: Նման տիկնիկները հատկապես անհրաժեշտ են շատ ակտիվ երեխաների համար, քանի որ, նման տիկնիկներին «կառավարելով», փոքրիկը, ինքն էլ չնկատելով, սովորում է վերահսկել իր շարժումներն ու արարքները:

Երեխաներ կան, որոնք միայն տիկնիկի միջոցով են խոսում: Տիկնիկների եզուն շարժումների լեզուն է: Դրանք ոչ երկար երկխոսությունների համար են, ոչ էլ չափազանց ծավալուն մենախոսությունների: Բայց տիկնիկը կարող է մանկական լսարանի հետ ժամերով հմտորեն զրուցել՝ ինքը չհոգնելով, հանդիսատեսին էլ չհոգնեցնելով: Երեխաները իրենց տիկնիկներն են պատրաստում, դրանք խաղացնում են, որպես դերասաններ հանդես գալիս, փոքր տաղավարներ ու բեմահարդարանքներ սարքում,

անհրաժեշտ մինիմում բեմական միջոցներն իրենց ձեռքով պատրաստում, պատմություններ, հանպատրաստից պիեսներ են հորինում, տրված թեմայով իմպրովիզացիա են անում, դրանք բեմականացնում ու ցուցադրում: Երեխաները միաժամանակ և՛ հեղինակներ են դառնում, և՛ դերակատարներ, և՛ հանդիսատես: Երեխան դառնում է թատերական բնագրերի հեղինակ, թատրոնը երեխաներն են «սարքում»: Երեխաները հանդիսատեսներին ներկայացման մեջ են ներքաշում: Այստեղ թատրոնը «կյանքի պահ» է, ոչ թե «ապրածի վերարտադրություն»: Ժողովրդական հեքիաթներն ու դրանց մշակումը թեմաների անսպառ ծով են: Ծիծաղաշարժ հերոսի ներմուծումը գրեթե պարտադիր է. դա միշտ էլ շատ արդյունավետ է:

«Բզեզի դպրոցը»

Սկսել ենք երաժշտական խաղ-ներկայացում՝ ըստ Թումանյանի «Բզեզի դպրոցը» ստեղծագործության: Սկզբում երկմտում էի՝ փոքր չե՞ն, (5 տարեկաններն են), բայց երբ սկսեցինք, ուրախացա, որ այդքան հնարամիտ, ըմբռնող երեխաներ ունենք: Միասին առաջ ենք գնում՝ երգելով, պարելով, խոսելով, խաղալով: Ուրախացնող է, որ հիշում են նախորդ օրը կատարած շարժումը, երբեմն իմպրովիազացիաներ են անում: Ինձ զարմացրեց, երբ փոքրիկ Արմինկան ուղղում արեց մեր՝ դաստիարակներին՝, մոռացել էինք երաժշտական մի հատված, նա մեզ հուշեց: Երեխաներին գրավում է նաև դեկորացիան և իրենց հագուստը: Միասին պատրաստում ենք մեր թատրոնին հարկավոր իրերը:

Արդյունքը իրական խաղով կներկայացնենք դիպլոմային նախագծի պաշտպանության օրը:

«*Սուտասանը»*

Երեխաներն անչափ սիրում են կատարել դերային խաղեր: Բազմաթիվ դերեր ենք փորձել 3-4 տարիքային խմբերում երեխաների հետ, սակայն ամենատպավորիչը եղել է «Սուտասանը» հեքիաթը: Երեխաները հրաշալի խաղացին այդ հեքիաթը:

Արձանագրեցի՝ նրանց մոտ զարգացավ գեղագիտական ճաշակ ՝ գեղարվեստական

գրականության նկատմամբ: Հեքիաթը հագեցած էր դերային կերպարներով, գեղեցիկ հագուստներով, դեկորներով, որոնք պատրաստեցինք ինքներս: Այդ հեքիաթը երեխաներին զվարճացրեց, հասկացան հնարամտությունը, սկսեցին իրենք հնարել նորանոր ստեր ու ծիծաղել: Ընտրեցին իրենց համար կերպարներ, սովորեցին արտահայտիչ խոսել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գրականության ուսումնասիրության, փորձարկումների արդյունքում ներկայացնում եմ հետևյալ եզրահանգումները.

- Թատրոնը գործունեության այն ձևն է, որը ներառում է կրտսեր տարիքի սովորողների գործունեության համարյա բոլոր ձևերը: Նաև այդ պատճառով է կարևոր թատրոնի կազմակերպումը նախադպրոցական տարիքում:
  Սաների ցանկացած գործունեություն ներկայացում է, դերախաղ. երեխան ստանձնում է մի միտք ու խաղում: Խմբասենյակը դառնում է փորձասենյակ, սաները՝ դերարարներ, իսկ դաստիարակները՝ բեմադրիչ ռեժիսորներ: Գործունեությունը կարելի է վերածել ներկայացման:
- Թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է երգելու, պարելու, ասմունքելու, հորինելու հմտություններ: Մշակում է խոսքի կուլտուրա:
- Խաղը, դերախաղը, բեմականացումը և վերջապես թատրոնը երեխայի զարգացման հրաշալի միջոց են, մասնավորապես իրավիճակային դերախաղերը, որոնք նաև հանկարծաստեղծման (իմպրովիզացիայի) մեծ հնարավորություն են տալիս երեխային՝ զարգացնելով նրաև նրա մտածողությունն ու սոցիալական հմտությունները:
- Եթե երեխան սխալ է արտասանում բառը, պետք չէ շտապել հանդիմանել, այլ պարզապես պետք է կրկնել ճիշտ տարբերակը: Դաստիարակին հետևելով՝ երեխաները շատ արագ են յուրացնում պահանջվող կանոնները: Զուգորդումներն առօրյա երևույթների ու առարկաների հետ օգնում են հասկանալ և հիշել նոր բառերը:
- Խոսելիս հարկավոր է մատնացույց անել առարկաները, որպեսզի երեխան ըմբռնի, թե ինչի մասին է խոսքը: Հարկավոր է երեխաների համար ամեն օր կարդալ, և այդ ընթերցանությունը պետք է լինի դանդաղ, պարզ ու արտահայտիչ:
- Երեխաները սիրում են ձեռք տալ գրքերին, թերթել էջերը և զարմանալ զետեղված նկարներով: Պետք չէ նրանց արգելել կատարել այդ գործողությունը:

- Երեխաների համար ընթերցելը պետք է դառնա ամենօրյա գործ: Պատմությունը ներկայացնելու համար կարելի է պատմել նկարների միջոցով, բացատրել, կենդանություն հաղորդելով հեքիաթին, նմանակել կենդանիների ձայները, ձեռքերի շարժումներով, միմիկայով ներկայացնել տարբեր դրվագները և կերպարների վարքը:
- Կարևոր է, որ երեխաները մասնակցեն դերախաղի մեջ գործածվող դեկորների պատաստմանը: Դերային խաղն ապահովում է արդյունավետ հաղորդակցություն, զարգացնում է ընդհանրության զգացումը, ուշադրությունը, սովորեցնում է ճիշտ արտահայտել մտքերը, կառուցել երկխոսություններ, զարգացնում է խոսքը: Երեխան սովորում է արտահայտել զգացումները, ձգտումները, սովորում է ենթարկել իր գործողությունները խաղի կանոններին, սովորում է նպատակաուղղված լինել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Դպիր» -«Մխ. Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական հանդես
- «Նախաշավիղ» - հեղինակ՝ Ի. Խանամիրյան
- Ջ. Ռոդարի « Ստեղ ծա գ ործակ ան երևակայոթյ ան քերակ անու թյ ուն »
- Լալա Սմբատյան-«Խաղերի և խաղ զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում»
- «Պարտեզ» «Մխ. Սեբաստացի» կրթահամալիր
- Ա. Վ. Պետրովսկի «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»:
- Ծննդից մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ
- Նախադպրոցական մանկավարժություն
- «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ» - ձեռնարկ
- «Հրաշք մատիկները» ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և մանկապարտեզի դաստիարակների համար»- Սիրամարգ Վարդումյան 2007թ.